

ՔԱՄԱՆՈՐՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Տոբոլսկի 10 թր.
 Վեցախանայ 7 »
 Արսևանահանի հասարակական 12 »
 Վեցախանայ 6 »
 ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԵՐ
 —(—)
 Գրքերի և սրբագրությունների 20 սանթիմ
 Երանցում սոցի 20 սանթիմ
 Գրքերի և սրբագրությունների 20 ժողովրդական

ՇԱՐՋՈՒՄ

Նախկին և նորագույն
 խմբագրությունը խմբագրի

APHA
 R. P. Kalémkarian
 (Autri-he)
 Mochliharistangasse W.
 Vienne

Давная на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjourn»
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԿՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶՈՐԵՔՆԱԲԻԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՈՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՄԱՍՍԱԽԱՆԱՏՈՒ 5-ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

ՎԵՐՋԻՆ ԶԵԿՈՅՑ

Պուլկարիոյ և արտասահմանի մեր արդոյ բաժանորդներէն կը խնդրենք որ անյապազ իրենց բաժնեգրները մեզ հասցնեն: Հակառակ պարագային ծագելիք անպատեհութեանց պատասխանատու չէ խմբագրութիւնս:

ՊԵՏՔ ՄԸՆ ԱԼ

Օր շանցնիր որ հիւանդ եղկի մը չի գիտէ մեզ, խնդրելու որ ճար մը խորհինք որպէս զի ինք կարող ըլլայ գտնելու անկողին մը, անկիւն մը իր ուժամբ սկզբները հանդիպանալու, ուսպ մը գեղ իր ցաւերը ամբողջ, պիտո ձեռք մը վերջապէս որ իր ներկայ դժբախտ վայրկեաններուն մէջ, երբ չը կրնար աշխատիլ, սընդարար պնակ մը երկնցնէ իրեն, որուն այնքան պէտք ունի ազատելու համար զինքը կաշկանդող հիւանդութենէն:

Իստեղիք անձկութիւնը այն անձին որուն այս կարգի գիտում կը կըլլայ, և որուն բոլոր սովորական միջոցները արդէն սպառած են. ո՛չ անհակական գըթարտութեան, ո՛չ քաղաքացիականութեան և ո՛չ ալ յունաց հիւանդանոցին գիտելու երեսնասոթ է քովը:

Ինչ ընել ուրիշն. թո՛ղու որ այդ խեղճ հիւանդը մեռնի թի ու անպատասխար, այս խտաշունչ եղանակին մէջ, սալայատակին զբառու ձիւներուն վրայ: Որքանո՞ղ խեղճը կը ներքէ պղ վայրենի անտարբերութիւնը: Տասնեակներով կարելի է համբոյլ ամէն քաղաքի մէջ այսպիսի թշուառներ որոնցմէ ոմանք ազգային գործունէութիւն մըն ալ ունեցած են երբեմն. սիրտ ու միտք մաշեցուցած են ընդհանրութեան բարոյն համար և սակայն այսօր ամենէն խոր թըշուառութեան և լքման մէջ կը քաննու երկասարկ տարիքի մէջ անձնաէր գործունէութեան:

մը մէջ գտնուած ըլլալու... մեղքը:

Առտի իրականութիւնը ինքնին երեւան կը հանէ պէտքը: Յայտնի բան է որ եղբայրական պարտքը կը հրամայէ մեզ երեսի վրայ ի թողոյ այդ եղկելիները. և արժանապատուութեան զգացումը կը յորդորէ որ ջանանք բուն իսկ մեր մէջ, մեր միջոցներով խնամել զիրենք, առանց մեր կարօտեալներով ամէն վայրկեան ձանձրութիւն տալու օտարին:

Արտասահմանի բոլոր հայաշատ քաղաքները պարտաւոր են 2-3 անկողիններ պարունակող պատասխարաններ ունենալ, ամենէն թշուառ, և կարելցութեան ամենէն արժանի հայերու համար: Այս պէտքը մանաւանդ ա՛յն պատճառով կը շեշտուի, որ վերջին դէպքերէն ի վեր, կարօտ պանդուխտներու թիւը ա՛լ աւելի շատցած է ամէն կողմ. պանդուխտներ՝ որոնք ծանօթ պատճառներով չեն կրնար օգտուիլ ո՛չ Պալտայ և ոչ ալ Իզմիրի հայ պատասխարաններու բարիքներէն:

Ի հարկէ այս պատասխարանները մեծ ծախսեր չեն ենթարկուեր և սակայն, զանոնք իրականացնելու համար առաջին անգամ հասարակ ժողովուրդին գիտնելու չէ: Իրատած է թէ աշխարհիս մէջ բոլոր կարեւոր հաստատութիւնները, ըլլայ կըթական, կրօնական կամ բարեգործական, գրեթէ միշտ անհատական առատաձեռնութենէ ըլխած են: Պէզճեան մըն է որ Փրկչի հիւանդանոցը և Սպարգալեան մը որ Իզմիրի հիւանդանոցը կառուցած են. և այլն: Վերջապէս անձ մըն է որ նախաձեռնութիւնը կը ստանձնէ, զլիսաւոր միջոցները կը հայթայթէ և տպա հասարակութեան կը թողու այդ հաստատութիւնը յարատեւելու, բարեփոխելու և կատարելագործելու հոգը:

Մենք գոյախտաբար մեր շուրջը այդ կարգի արամադրութիւններ չենք տեսներ: Արդեօք անցարձ կերպով վերջա-

ցած են այն հին բարի ժամանակները ուր ունեւորը կեանքի որոշ մէկ կէտին հասնելով, կը սկսէր իրմէն ու իրեններէն զատ ուրիշներու վիճակն ալ հոգալ, լաւ յիշատակ, օրհնուած անուն ձգելու հետամտիլ. և անգործ և հանգիստ չը զգալ ինքզինքը, իր մեծաշուք տանը մէջ, մինչև որ կարօտեալներու օգտակար մէկը, նախախնամութիւն մը ըլլալու անհուն և վսեմ գոհունակութիւնը չունենար...:

Եթէ մտմուլին զլիսաւոր պարտքերէն մէկն է մասնանիշ ընել այն շարիքները որոնցմէ ընկերութիւն մը կը առնուպի, և որքան հնար է պրպսել անոնց դարմանները, մենք, աւելին ընելու անկարող գէթ մեր պարտքը կատարած ըլլալու գոհունակութիւնը իր վայելքնք: Թո՛ղ ամենք իրենցը կատարեն: Կերպանը անոնք ճիւղի մը պէս բերանը բացած մեզ կուլ տալու կը սպասէ: Ամենք ալ յուշիկ յուշիկ անոր կը գիտնենք: Արուեստական միջոցներով կրնանք շատ շատ այդ շարաշուք վայրկեանը ուշացնել. բայց անպատճառ պիտի երթանք, վճիռը արուած է. ինչպէս կրուէ Պօսիէ: Մարդկային կեանքը արգարև սին բան մը կը ըլլար, եթէ գերեզմանէն ալ անգին ապրելու, փառաւոր կեանքով ապրելու միջոցը չունենար: Կայ բարեբախտաբար այդ միջոցը: Բարեգործութիւնն է այն. կամ լաւ եւս պարտաճանաչութիւնը: Մի՛ մտածէք շատ ոսկի թողուլ ձեր զաւակներուն: Ասիկա ծնողական յետին պարտականութիւնն է, որ շատ անգամ աղետարիք ալ կը դառնայ, ծոյլեր, շտայլներ, պատրաստակերներ, ապականածներ կը ստեղծէ: Այն ստանքի. ազգի և նմանի սէրը ժառանգութիւն ձգեցէք անոնց: Եւ այդ կերպով պիտի օրհնուիք ձեր զաւակէն այս ազգէն ալ, երկինքէն ալ:

ԳԱՄԵՐ-ԱՐՇԱԽԻՐ

—(—)

ԿԱՐԻՊ ԱՂԲՈՐ

Կարիպ աղբիւր, պակղոսիս աղբիւր
 Բարեւ ինչի, ի՞նչ կանխ,
 Ին աշխարհիկն ևնր եւ եկեր.
 Լուսն ունիւ, կը ջեւս:

Ի՞նչ ես նստե, կարիպ աղբիւր
 Աս օտարին իրկիրը.
 Ին աշխարհիք սեւ և հագնե,
 Արուս կտեր գեւերը:

Ին սիրելիք հոն քոյուցիր
 Անգոք շունի բերնի մեջ.
 Կերքաւ, սախ, օտար երկիր
 Ձեզ չեւ մոռնար միկնե վերջ:

Կերքաւ, սախ, շացոյ կեկանց.
 Կերքաւ ևնր ուժ առնեցոք.
 Որ պաշտպանես Հայաստանց
 Լաւեւոյ ազաւ բեկոք:

Բայց շուս մոռնար քո խոսուաներ.
 Մտիկ ելաւ քո երկիր.
 Կերկի ինչ շուս եւ խարիւր
 Օտար առնա ու եփիկ:

Կարիպ աղբիւր ուշի և կուր
 Ին հայրենիքի և կանչող.
 Թարիկն ինրսին քիւճկեկն ու քուր
 Հերիք սեւո սուս ան, զոյ:

Կարիպ աղբիւր ի՛նչ շուս կերքաւ
 Մեւ սիրելեաց օգնեւո.
 Ապա քի ոչ մի սեւ պասանիք
 Մոս և զանոնք ծածկեւո:

ԽԵՁՕ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Գանձիւ . 9 զեկս.

Խոստմանս համեմատ ներկայիս կրէտէի մասին տեղեւութիւններ կը յղեմ ձեզ. Պոլիս, Իզմիր, Միտիլի, Սամոս և ուրիշ սեղեր հանդիպելէ ետք վերջապէս Բիրէա հասայ, ուսկէց Աթէնքը տեսնելու գացի: Յայնբու ետանդն ու ցուցածող հայրենասիրութիւնը աննկարագրելի է. գիշեր ցորեկ «չիթօ Եսրկիտո» կը պոռան: Հաննա հասնելով առաջին անգամ աչքիս հանդիպեցան շարս մեծ տէրութեան դրօշները, որոնք խրոխտաբար կը ծփային, թրքական խիզուկ դրօշի մը քով որ ոգորմուկ կերպարանք մը ունէր: Այսքոր շի ծուկնն է կզգիլն մէջ օսմ. տիրապետութեան միակնշանա՛ր: Հաննաի մէջ միմ, տրիֆրանսական զօրքեր կր տնուին

և ամբողջ քաղաքին կարգն ու սարքը անոնց ձեռքբերուն մէջն է . ամբողջ ժողովուրդը հլու համակերպութիւն մը կը յայտնէ : Թուրքերը և յոյները հետզհետէ իրենց զէնքերը յանձնելու վայ են . իսկ թրքական 48 հատ խոշոր թնդանօթներ և ուրիշ ռազմամթերք շոգեհանները կը բեռնուին : Մարդուս խղճալը կուգայ . այսքան թնդանօթներուն գոնէ մէկ հատն ալ չեն պարպած : Թրքական պաշտօնէութեան հոսն անգամ չի կայ այստեղ : Օրէնքը ամենուն համար հաւասար է : Այսօր ժամացոյց մը գողցող յոյն մը վեցամեայ բանտարկութեան դատապարտուեցաւ : Քաղաքային ոստիկանութիւնը հետզհետէ կը կազմուի . ամէն ազգէ մարդիկ կը ղուլուրուին , բաւական է որ յունարէն գիտնան . տաճիկ ոստիկաններէն շատերը կրէտական ոստիկան գրուած են : Քանի մը հատ ալ հայ ոստիկաններ կան երեք անգլոսի ամասականով : Երկրորդ իշխանը վաղը պիտի հասնի . Հաննաէն Ռէթիօ երթալով հոն ալ ռուսական զինուորներու հանդիպել . յորոնք նոյն գերը կը կատարեն ինչ որ ֆրանսացիք Հաննաի մէջ :

Վերջապէս Քանտիա հասանք . կրէտէի ամենէն մեծ , բանուկ և վաճառաչաճ քաղաքն է . պարիսպներով շրջապատուած : Հոս կը գտնուին 3000 անգլիական զորքեր . նաւահանգիստը գրաւուած է 8 հատ անգլիական հսկայ զբրահաւորներով : Ամբողջ քաղաքը զինուորներով պաշարուած է և ասոնց հրամանատարը գլխաւոր զրահաւորին հետ հեռագրաթերով հապորդակցութեան մէջ է : Ամէն տեղ փայտաշէն զօրանցներ կառուցուած են և ահապին քանակութեամբ ռազմամթերք կայ , այնպէս որ եթէ քաղաքին մէջ փոքրիկ խլրաւում մը լինի , անգլիացիին թէ ծովէն

և թէ ցամաքէն անխնայ կրակ պիտի թափէ . Իսկ թուրքին զօրութիւնը աւելի մեծ է եղեր և 110 հատ թնդանօթ ևս համընդ . բազմաթիւ ռումբերով ծովեզերքին վրայ կուտանուած էին փոխադրուելու համար : Քաղաքին ընդհանուր տեսարանը շատ սոսկալի է , շուկան որ Վառնայի ամբողջ շուկայէն աւելի ընդարձակ է , այրած ու տեւրակ է , անխնայ կերպով զոհ գացած ըլլալով թրքական վայրագութեան : Հոս է որ հաղարի մօտ յոյներ ջարդուեցան թուրքերու ձեռքով . տակաւին տեղ տեղ արեան հետքեր կը գտնուին : Իսկ թանձկաց թաղը ամբողջապէս մոխիր գարձած է անգլիական ռաբաձգութեան հետեւանքով :

Քարեախտարար այս պահուստ մէջն րան վերջ գտած է . յոյն և առճիկ ամէնքն ալ գոհ են անդիլիական տիրապետութենէ : Հոս ալ կամտոր զինուոր կը գրեն . քաղաքին պահակազուրկը Կիպրոսի անգլիական զինուորներէն կազմուած է , մեծ մասով տաճիկ . այս զինուորներուն մէջ երկու հայեր ալ կան , որոնց հետ ծանօթացայ . Ենգլիացիներուն տիրապետելու ձյուլմները այնքան զգալի են որ ես չեմ կարծիր որ հեռանան () : Գիւղացիներուն գարի , ցորեն և ուրիշ արմտիքներ բաժնուած են սերմանելու համար . հակառակ վարուցները խստիւ պիտի պատժուին : Վաղը վեց հոգի տաճիկ կախաղան պիտի հանուին , շատ գոհ մնացի այս լուրը առնելով : Առեւտրական գործերը հետզհետէ կը բացուին : Երկու ամիս առաջ շատ գործ կայ եղեր հոս տեղ անգլիներէն գիտցողներու համար : Մինչեւ հիմա տասը հատի չափ հայ թարգմաններ կան որոնք 14 սակի ամսաթուղակ կըստանան :

Յետեւութիւն : ՆՈՐԱՅՐ

Պրայիլա . 17 Դեկտ.

Քանի մը օր առաջ , անգլիական և իտալական բեռնարար շոգեհաններով , ասկէց Սուլիա մեկնեցան բազմաթիւ հայ պանդուխտներ , որոնք արդէն հոն գտնուած գործաւորներուն խառնուելով գիւրու թեամբ դուրս կելլէին : Դժբախտարար վերջին նաւերէն մէկով զացողները կարգիլուին և չեն կրնար ցամաք ելլել : Ռուսան կառավարութիւնը չի նայելով որ անոնք Պրայիլայէն կերթային , այս անիրաւ կարգադրութիւնը ձեռք կառնէ անոնց դէմ . կարգադրութիւն մը որուն մէջ ի հարկէ կարեւոր բաժին մը ունենալու են սեղուոյ թուրքերը :

Այժմ իրամանաք թէ յիշեալ շոգեհանը Սուլիայի նաւահանգիստէն հեռուցելու հետեւ անելով մեր ճամբորդ պանդուխտները : Ձի գիտցուի թէ արդժօք այդ թշուառները Պրայիլայի հանուին թշնամիին ճանկը յանձնուելու , թէ պիտի սարուին տելի հեռու ու է օտար ափի վրայ նետուելու : Մշտցի , Վանեցի , Սեփաստացի և Գարա հիւարցի պանդուխտներ են թուրքօ-ռուսական միացեալ անօրէնք կառավարութեան այս զոհերը :

ՆԱՍԱԿ ԽՍՐԱԳՆՈՒԹԵԱՆ

Թոյլ տուէք հրապարակու իմ անկեղծ շնորհակալութիւնս մատուցանել խմբագրութեանդ , որ հասարակական շահը եւ ճշմարտութիւնը աչքի առաջ ունենալով որոշել է ճարտունի էջերը բաց անել այն բոլոր անձանց համար , որոնք մի բան ունին ասկից իմ եւ իմ սեսչութեանս ներքոյ գտնուող զարգացող մասին : Մեզանում , զժբախտարար , զեռտիրող սովորութիւն է յանձնել սղային զարգացումը եւ յետոյ բնաւ չնետազգուրել թէ արդիօք այդ հասարակութեան մէջ ի՞նչ է աւանդուում , ի՞նչ ուղղութիւն , ի՞նչ ոգի է տիրում :

շատ երկար չէր կրնար բաժնուիլ անոնցմէ :

Քանի մը օրեր ապրեցաւ հինէն միացած փշրանքներովը , քանի մը իրեն պէս աղքատ կիներ , վրան արգահատելով , պատառ մը շոր հաց տուին իրեն , քանի մը պանդուխտներ գտաւ եւ անոնց լաթերը սկսու լուալ . բայց ասոնք մեծ բան մը չէին արտադրեր , եւ օրէ օր աւելի քիչցան . եւ վերջապէս օր մը բոլորովին զածեցան և կարծես թէ անբրեւս ձեռք մը իրմէն կը հեռացնէր բոլոր համակիւր զէմքերը ու զթացող սիրտերը :

Սնունդի նուազութեան պատճառով իր պղտիկները օրէ օր կը հիւժէին , մանաւանդ Անուշը հազով մը կը տառապէր . եւ որոշ կերպով կը նիհարնար , կը հատնէր : Ու ինք Աստղիկ , որ իր արիւնին յետին կաթիլը պատրաստ էր տալու անոնց համար , ոչինչ կրնար ընել :

Ասոնց վրայ աւելցան նաեւ տանտիկնոջ խիստ զէմքը : Սենեակին պայմանաժամը լրացած էր , եւ տանտիկնոջ դրամ կը պահանջէր . Աստ-

ուրպական ազգերի մէջ ծնող զկոյ որ շաքաթը մի կամ երկու անգամ զարոց չայցելէ , եւ ի մօտոյ չսեղեկանայ իր սղայի նկատմամբ : Իրարոցը ընտանիքի շարունակութիւնն է , ուստի այդ երկու շրջանները իրարու հետ սերտ յարաբերութիւն պիտի ունենան , եւ ո՛չ թէ մին միւսի ազգեցութիւնը եւ արդիւնքը չէզոքացնէ , ինչպէս սովորաբար կատարուում է մեզանում :

Եթէ ծնողները թիրախում են իրենց պարտակալութեան մէջ , մասամբ տղաութեան , մասամբ իրենց պարտակալութիւնները չճանաչելու պատճառով , սակայն այդ տեսակետով ոչ նուազ պարտազանցութիւն է գործում եւ երիտասարդութիւնը , ճշմարիտ , յատկապէս թեան ազգակ երիտասարդութիւնը աններելի յանցանք է գործում չճանաչողուելով ազգի սպառազ սեղուողը պատրաստող հիմարութիւններով :

Հասարակաց բարիքը քանակացող երիտասարդը , զարոցական եւ հանրական այլ հաստատութիւնները ու սրանց մէջ գործող պաշտօնեաների քննած ժամանակին , չպէտք է բաւականանայ չսկոյտուան լուրերով եւ այսօր այն կուրծեցի սքեմ բաների անկեղծութիւնը լսած անգեկու թիւններով . այլ նախ սեպրեկ պարտակալութիւնը պիտի լինի սեղեկու տեղ հեռագրուելու , ստուգելու ունին ինչ եւ ապա ճամբարակութիւնը էրապարակ զալու ձապիցի անխնայութիւն այն բոլորը , ինչ որ արդարեւ պատրաստ կելլէ , հեռուարար եւ շնորհակար : Ինչ համար շատ մեծ նշանակութիւն չունի հայերիս այս ուսն թուով զարոց ունենալը , ինչ որ կարեւորն է՝ այդ զարոցի ոգին է : Ի պրոցի ոգին , ուղղութիւնն է , որ նրան տալիս է իր իսկական նշանակութիւնը , Հակառակ զէպուով զարոցը յետադիմութեան եւ ֆիսակալութեան վստարան է դառնում : Ապացոյց Յիսուսեանների եւ այլն զարոցները , ամէն տեղ եւ ամէն ժամանակ :

Եթէ ընդունում ենք որ մեր զբարոցներէն պատուելիական գրութեան արտաքուստովը յատկապէս թեան մի քայլ ենք արած , ապա պիտի ցանկանանք տեսնել եւ նրա հարազատ ընկերը՝ լուրջ քննադատութիւնը : Կրկնում եմ , այդ մասին յատուկ շնորհակալութիւն խմբագրութեանդ :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ (7)

ՀԱՅԻ ԳԻՆ

ԳԱՂԹԱԿԱՆԻ ԿԵԱՆՔԷ

ԺԳ

Թերեւս քիչ մը չափէն աւելի երկար ծանրացանք անցեալին արիւնալի եւ սիրուր կողմերուն վրայ , եւ Աստղիկը միս միսակ թողուցինք աչուսի կիսալուսնկայ գիշերը , իր պատուհանին եզերքը :

Ինչ որ փորձեցինք մենք պատկերացնել , ուրուանկարն էր լուկ , անոնք իրենց բոլոր արհաւիրքներովը , իրենց բոլոր կենդանութիւնովը , հասիկ հատիկ Աստղիկի երեւակայութեան մէջէն կանցնէին հիմակ , արիւնոս տողանցումով մը :

Հոն պատուհանին եզերքն էր միշտ Աստղիկ , իր անշարժութեան մէջ , կրկնելով միշտ իր յախանական մրմունջը :

—Աստուած իմ . Ամբողջ ամիս մը եղած էր որ Մարկոս աղան վառուած էր սենեակէն , եւ ատ ամսուան շրջանին մէջ անցած էր թշուառութեան բոլոր խաւերէն : Մարկոս աղան իր ակնկալութեան մէջ խաբուած , անմիջապէս կտրել տուած էր Աստղիկի յատկացուած նպաստը :

—Ես կը կարծէի որ պարկեշտ կնիկ մըն է , ան ըսէ . . . Մարկոս աղան էր ըսողը , ո՛վ չի պիտի հաւատար :

Աստղիկ միտքէն իսկ շանցուց բողբոջ Մարկոս աղայի տղեղ վարմունքի դէմ . անոր մտածումն անգամ գարշանք կազդէի իրեն . եւ ինք իրմէն կամչար :

Սակայն նպաստը գաղթած էր , եւ ապրիլ պէտք էր . Աստղիկ իր բոլոր ուժերը ժողովեց ցործ մը ճարելու . իր եւ զաւակներուն ապրուստը հոգալու համար :

Բայց ինք զաւատացի անփորձ , եւ մանկամարդ կին մը , ինչ կրնար բնել . մտնաւանդ որ երկու մասոյց զաւակները վզին պլլուած էին , եւ

չատ երկար չէր կրնար բաժնուիլ անոնցմէ :

Քանի մը օրեր ապրեցաւ հինէն միացած փշրանքներովը , քանի մը իրեն պէս աղքատ կիներ , վրան արգահատելով , պատառ մը շոր հաց տուին իրեն , քանի մը պանդուխտներ գտաւ եւ անոնց լաթերը սկսու լուալ . բայց ասոնք մեծ բան մը չէին արտադրեր , եւ օրէ օր աւելի քիչցան . եւ վերջապէս օր մը բոլորովին զածեցան և կարծես թէ անբրեւս ձեռք մը իրմէն կը հեռացնէր բոլոր համակիւր զէմքերը ու զթացող սիրտերը :

Սնունդի նուազութեան պատճառով իր պղտիկները օրէ օր կը հիւժէին , մանաւանդ Անուշը հազով մը կը տառապէր . եւ որոշ կերպով կը նիհարնար , կը հատնէր : Ու ինք Աստղիկ , որ իր արիւնին յետին կաթիլը պատրաստ էր տալու անոնց համար , ոչինչ կրնար ընել :

Ասոնց վրայ աւելցան նաեւ տանտիկնոջ խիստ զէմքը : Սենեակին պայմանաժամը լրացած էր , եւ տանտիկնոջ դրամ կը պահանջէր . Աստ-

ղիկ որ պատառ մը հացին ախը կը քաշէր , ուրկէց պիտի ճարէր վարձը :

—Կամ դրամ եւ կամ գուրբ , աս եղած էր տանտիկնոջ վերջին խառնակ : Աստղիկ պաղատած էր որ գոնէ մտնուան մը համար թոյլ տայ իրեն հոն բնակիլ . բայց ան անստան մնացած էր իր սպտոնալիթին մէջ . եւ նոյն իսկ չար փայտ մը ֆէմքը վրայ , մտեցած էր Աստղիկին անտր երեսը շոյած եւ տեղացեացած եր . . .

—Դուն եթէ ուղեւս աստա գրամ կրնաս շահիլ :

Ախ աս աղուորութիւնը , ինչքաքաշած էր անոր երեսէն . անոր համար հայածուած էր հայրենիքին մէջ քրդերէն , ու նոյն հալածանքը կը կրէր քաղաքակիրթ երկրի մը մէջ , նոյն իսկ իր ազգակիցներէն :

Ինչ Աստղիկ , պահ մը պատրաստուցնեցած էր . անցեալը եթէ ոչ անբողովին մոռնալու , պէթ զանոնք անթեղելու , բայց կարճ եղած էր ան . եւ ներկան , աւելի սպառնացող աւելի անարկու էր իրեն դէմ կը ցցուէր :

Եւ ետ էլ իմ կողմից թախանձանք խնդրում եմ հակառակորդներին...

Ես ոչ միայն աշխատած եմ զբարոյներով, ուսման տեսակետից, աւելի բարձր գրութեան մէջ դնել...

Իմ հակառակորդներին կը միայն հակառակը ցոյց տալ, յուսալով որ թիւտ էջաբարձութիւնը իրեն յաղթանակը կը տանէ։

Ս. Սապահ-Գիւլեան Թուշուք. 11 Դեկտ.

ՔՐՈՆԻԿ

Քէնտեանցիներն մեզ կը գրեն թէ տեղւոյն նորակառոյց գայրոցին չէնքը արդէն աւարտած է և թէ

Պ. Ս. Սապահ-Գիւլեան վերելի նախկին կողմից հաստատել ինչ որ անկէջ առաջ գրած էր Արտաւազգ...

Ս. Ս.

բացման հանդէսը մտաբերս պիտի կատարուի։

Ինքնակէտեանի կտակային խնդիրը տակաւին պատրիարքարանի պանազան ժողովները շարժրկել չէ գաղթած։

Փաստաբան Սուրէնեան էֆ. ի առաջին պարտութեան մը առաւել կարեւորութիւն տալու, աւազակապետին դէմ իր պայքարը յամառօրէն կը շարունակէ։

Կըսուի թէ Սուլթանի հըրամանով Մալիէն 1000 ոսկի պիտի յանձնէ հայոց պատրիարքարանին, Հայաստանի սոփատանջ հայերուն բաշխուելու համար։

Նոյեալ շարաթ գիշեր տեղի ունեցաւ տեղւոյ վարժարաններու նպատին համար տրուած պարահանդէսը։

Ս. Ս.

Հակներու պորակի մը, և հայերիներու ու պատկերներու տակ Ամէն բան կանոնաւոր անցաւ։

Հատոյթը 800 ֆր. էն աւելի է։ Ն. Ս. Ս. Ա. Ա. Ս. Ս. Ս. Ս.

Հ. թ. ի. Մանչեսթըր. — Ձեր բաժնեգիրն ստացանք. Երանի թէ Մանչեսթըրի մեր միւս արդոյ բաժանորդներն ալ փութային ձեր օրինակին հետեւիլ։

Սրբինկֆիլտի (Ամերիկա) ֆրանգ և ամերիկեան վարժարանին աշակերտող Պ. Արամ Ս. Ձարդարեան, երկար ատենէ ի վեր իր եղբոր նամակ չէ գրած։

Սր. Բնար. — Մեր քովը նամակ մը ունիք, որո՞ւ յանձնենք։

ՔԱՂԱՔԱՎԱՆ ԴԵՊԲԵՐ

Ամերիկեան, Խնդիր

Կ. Պոլսէն կը գրեն «Էնտէբանտան» Պեշտ լրագրի։ Աւսթրո-առաջական համաձայնութեան արգիւնքները օրէ օր կը զղացուին այստեղ։

Արգէն թուրքի փաշային Լիվատիա այցելած աւետէն, Ձաւրը մատնանիշ ըրած էր Մակե-

նէր, եւ ամբողջ մարմինը ջուր կը տրած էր։

Աստղիկ չուարած մնաց, Անուշը սաստիկ տենդով մը սկսած էր տառապիլ։

Վահէն ձայնը աւելի բարձրացուց եւ հեծկտալով կանչեց։

Աստղիկ լսեց աս անգամ. վազեց անկողնին մօտ. դիրկը առաւ Վահէին գլուխը, համբուրեց զանի ու ըսաւ։

Աստղիկ գրկին մէջ տոսած մտաւ անկողին, ձեռքովը կը սրբեր անոր քրտինքները, կը շոյէր գլուխը, կը համբուրէր այրող շրթնքները, աս զարմանները միայն կրնար տալ իր զաւակին։

Լուսինը բնկողնեցաւ հորիզոնին վար, իրեն հետ տանելով իր ճառագայթներուն տարած լուսաւորութիւնը, ու պիշերը մտաւ իր սովորական սեւութեանը մէջ։

Աստղիկ մնաց այնպէս, զաւակը գրկին մէջ, մինչեւ որ քիչ քիչ անոր տաքութիւնը մեղմացաւ, հազը կարեցաւ և Անուշ տեսակ մը թրմութեան մէջ քնացաւ։

Թոնիոյ և հայկական խառնութիւններու թատր գարձող նահանգներուն մէջ բարենորոգումներ մտցնելու անհրաժեշտ պէտք էր։

Եւ որովհետեւ Պ. Ձինովիէվ ալ Լիվատիա մեկնելէ առաջ նոյն յայտարարութիւնը ըրած էր Գրան՝ առկէց կը հետեւի թէ Ձարը ուղած է իր ներկայացուցչին գործածած լեզուն հաստատել և ասիկայ ըրած է այնպիսի կերպով մը որ Սուլթանը բնաւ չի տարակուսի ներկայ կացութեան առաջ ըբրած վտանգներուն մասին։

Ձարը իր գործելու եղանակին մէջ կառաջնորդուի ընդհանուրի շահը ունենալով աչքի առաջ, որովհետեւ նոյն իսկ թուրքերն ալ կը տուժեն այժմ, և անոնք ալ բարեկրօնողներու տուած բարեքնքէն պիտի օգտուին։

Ձարը է որ Նիկոլա Բ. ստիպաղար կը հրահրէ թուրքիան օգտուելու միջոցով հիմա մտածուած ճրագիրներէն, նա մանաւանդ կալաթա-Սէրայի յանձնաժողովի ծրագրերէն։

Ձարին ինքնագիրը նամակէն և թուրքիան փաշայի տեղեկագրէն զատ, որոնք կըսուի թէ այնքան խոր տպաւորութիւն մը գործած են Սուլթանին մաքին վրայ, այժմ ահա Պոլսոյ աւարտական գեւսպան Պ. Գալիչէն է որ յաճախակի այցելութիւններ տա-

Աստղիկ ալ չէր կարող գիտնալ աս ցաւերուն, չէր կրնար թողոյ որ այդպէս զատակները լոկ, Յիշիկ հասնին ու մնանին, պէտք էր վերջ մը տալ աս տնտանեկի կացութեանը, պէտք էր փրկել Վահէն, փրկել Անուշը։

Ոչ, աշխարհք բոլորովին Մարկոս սղոններէ կազմուած ըլլալու չէր, անյուշտ աւելի զթոտ աւելի պարկեշտ մարդիկ կային, բայց ո՞ր էին տատնք եւ ո՞ր կրնար փնտնել աս գտնել։ Որոշեց հետեւեալ առաւան կանուխ երթալ գաղթականաց խնամակալութեան սենեակը, թերեւ գիւլային իր զաւակներուն վրայ, գոնէ թփիկ մը զրկէին, ու աս մտածումն ուր մը, յոգնած գլուխը հանդիցցուց բարձին վրայ, զատակներուն քովիկը։

ՎԱՀԱՆ, ՄԱՆՈՒԼԻԱՆ, (Շարունակելի)

Եւ իր հին ու նոր կրակները կը վերածարծէր։

Աչքերը երկինքի խորութեանցը մէջ մտնած, իր արձանի դիրքին մէջ, Աստուծո՞վ հրաշքի մը կը սպասէր, ալ ան մտցած էր իր միակ յոյսը, եւ իր հաւատքին մէջ անկեղծ, չէր կարծեր որ յաւիտենակունք երկար ատեն անտարբեր մնար իր ատուածատ կացութեանը, ուստի կը բարանակալէր ամբողջ գիտելու կրկնեղով միջոց։

Աստուծո՞վ իմ։

Ս. Ս.

Լուսնիան վար թշու և հորիզոնին եզրքէն իր սփռուեակ շողերը երկնցոց ներս, Աստղիկի սենեակը։

Անկեղծ մը, վերակալի մը տակ կեկուած էին Վահէն ու Անուշը, իրարու պիտուած։ Լուսնիայի լոյսը ինկաւ անոնց դալկացած դէմքին վրայ, Վահէին աչքերը լոյսին նուրբ գգուանքէն խաղտաւ զին, ալ տեսնունքները բացաւ, ձեռքովը երկնցոց եւ մեղմ ձայ-

նով մը պոռաց։

—Մարիկ անթի իմ։

Աստղիկ անչափ ընկզմած էր իր գառն մտածումներուն մէջ, որ չի լսեց։

Վահէն ձայնը աւելի բարձրացուց եւ հեծկտալով կանչեց։

—Մարիկ անթի իմ։

Աստղիկ լսեց աս անգամ, վազեց անկողնին մօտ, դիրկը առաւ Վահէին գլուխը, համբուրեց զանի ու ըսաւ։

—Հիմակ գիշեր է զաւակս, վազն առաւ։

—Շատ անթի իմ մարիկ, սիրտս կտոր կտոր կըլլայ։

—Ձաւակս հիմա ուտելիք չիկայ, վազն առաւ ըսի, քուրիկդ ալ հիւանդ է կարթնցնես հիմակ։

Իրաւ աս չարժանիքէն Անուշն ալ արթնցաւ, ու խեղդուած ձայնով մը կանչեց։

—Մարիկ կը վառիմ կոր, գլուխս։ Աստղիկ վար գրաւ Վահէին գլուխը և գիրկը սոսա Անուշը։

Կրակներու մէջ էր Անուշը, կը հեւար, գփուարութիւնով շունչ կառ-

լով երկար ժամ, մի և նոյն բաները կը հաստատէ և կը պահանջէ ինչ որ բացարձակ ապացոյցն է Մուրադիէվի Վնէննա ըրած վերջին այցելութեան առթիւ, առաջընտրական համաձայնութեան Գանի մը օր ետքը, Պ. Չինովիէվ ալ, որ Լիվաթիայէ վերագառնալու առաւելութիւնն ունէր, անգամ մըն ալ հաստատեց իր Օգոստ. տիրոջ և Աւսթրիոյ դեպքանին համանման գաղափարները:

Ի՞նչ պիտի ըլլայ հիմա: Վայրկեանը հանդիսաւոր է: Բարենորոգմանց խորհուրդը կը բախտի երկու մեծ տէրութեանց կողմէն յանուն խաղաղասիրութեան կամ լաւ ևս նոյն իսկ Թուրքիոյ պահպանման համար: Սուլթանը չի կրնար խուսափիլ բայց միւս կողմէ կը մտածէ թէ բարենորոգումներ մտցնելով, իր կայսրութիւնը կործանած չի՞ պիտի ըլլայ, քանի որ իսլամ տարրին գերիշխանութիւնը պիտի տկարանայ յօգուտ քրիստոնեայ տարրին, որ ամբողջ Վարչութեան մէջ, աշխարհակալող ցեղին վրայ պիտի իշխէ: Ահա անսովոր կարեւոր նկատում մը, որ իհարկէ զանց չի կրնար առնուիլ: Ոչ մէկ կառավարութիւն կամ իշխանութիւն անձնապահ ըլլալ չի յօժարիր: Վտանգը միշտ վտանգ է. և քանի որ եւրոպական բոլոր վիճակները կորսնցնելու վտանգը կայ, աւելի շահաւէտ չէ՞ Թուրքիոյ համար իր ստացուածները պաշտպանել պալքաններն աւելութիւններու մտադրութեանց դէմ, փոխանակ թշնամին (բայա յոյնը, պոլիկարը, սերպը) մացնելու ամբողջին մէջ, վարչական այնպիսի բարենորոգումով մը որ բոլորովին թշնամիին նպաստաւոր է:

Հաւանական է որ Թուրքիան Ռուսիոյ և Անգլիոյ բազմաքններուն համակերպիլ յայտարարելէ ետքը, այս անգամ ալ ջանայ բարենորոգումի վորձերը ապարդիւն հանելու, ահագին անջրպետներ թողլով տրուած հանդիսաւոր հրամաններուն և անոնց գործադրութեան եղանակին մէջ: Ասիկա պիտի նշանակէ օսմանեան նախկին գաղափարներն վերստին ալի համարձեցնելը, Հալթը-Հիւմայունները և կայս. հրահանները որոնք միշտ մեռեալ տառ մնացած են: Իրաւ է թէ հիմա կայսրութիւնը տարբեր է, և օսմանեան կառավարութեան կիցայ գործին մէջէն պատուաւորապէս գուրս ելլել իր հաղարարութիւններէն օգուտն չի:

Բարենորոգումները բարենորոգում ըլլալուն համար չէ որ կը մերժուին: Ամէնքն ալ կը փափաքին որ, օրինակի համար, արդարութիւն և ապահովութիւն իշխէ ամէն նահանգներու մէջ, բայց այս արդիւնքները, քա-

ղաքական տեսակէտով վնասակար կը համարուին, քանի որ կըստ պառնան փճացնել իրական իշխանութիւնը ցեղի մը, որ չէ կրցած իւրացնել քրիստոնեաները, որոնք իւրամենքն շատ աւելի բազմաթիւ են եւրոպական գաղափարներու մէջ: Հիտաւարար Չարին և Ֆրանց-Ֆոլգէֆ կայսեր բոլոր յանձնարարութիւններուն հակառակ, ապաստած արդիւնքը կարելի պիտի չըլլայ ձեռք բերել:

Գերմանական դահլիճը ջանքեր կընէ որպէսզի գերման գաղթականները դիւրութիւն ունենան հողեր գնելու Անատոլի մէջ: Մինչև հիմա այդ գնումները «պազշիշի» խնդրանքներու կը բաղկանին: Պէտք էր Պոլիս դիմումներ ընել և շատ մը դրժուարութիւններու դիմադրել, քան մը որ գնումները կը գանգաղեցնէր. հիմա կայ խոչընդոտները վերջացած են. գերմանացիները միջոց պիտի ունենան քանի մը նահանգներու մէջ գաղթականութիւն հաստատելու: Գաղափարին իրագործումը ամէն հնարին միջոցներով առաջ կը տարուի: Վարչական դժուարութիւնները հարթութիւն պէս, գաղթականութեան հոսանքը և կուտակման զօրութիւնը պիտի յաջողցնեն գերմանական բոլոր ծրագիրները:

Մակեթոնական բարենորոգումներու նկատմամբ Սասանեանները վաղա յոյժ լաւատես տեղեկագիր մը յղած է Գրան, այդ տեղեկագիրին նախկին ապահովութիւնը կատարեալ և զիւզացին գոհ ու երջանիկ է: Առանց այս տեղեկագիրին բոլոր կէտերուն հաւատալու, պէտք է ընդունինք սակայն թէ, նոյն իսկ իրազեկ անձերու վկայութիւնով, Մակեթոնիոյ թէ քրիստոնեայ և թէ իսլամ տարբերուն կացութիւնը կաշտուածին չափ թշուառ չէ և թուրք կառավարութիւնը քանի մը ջանքեր ըրած է այն կողմեր:

Ասկէց զատ, Գուռը նախազգուշական միջոցներ ձեռք առած է: Բացի պահեստի հեծելազորներու նորակազմ գունդէն և այն քսան վաշտ զինուորներէն և քսան թնդանօթներէն որոնք Անատոլէն բերուեցան, թուրքերը զօրացուցին նաև Յրգ պօրաբանակը որ ուղղակի Մակեթոնիոյ վրայ կը հսկէ, իր զանազան վաշտերով, որոնք յըռուած են Պիթոլիտի, Սուլունի և Սքորիէի միջև: Տէմիթիանի գերբը երթալով կամրանայ և նորանոր ուժերու կը սպասուի: Թուրքերը կը յուսան որ Անգլիոյ պատրաստութիւններէն ծագած միջազգային մտահոգութիւնները, եւրոպեան ուշադրութիւնը դէպի Մայրագոյն Արեւելք պիտի փոխադրեն և Թուրքիան հանդիս պիտի թողուն:

Ամէն պարագայի մէջ, եթէ փոթորիկը բարձրանայ, պալքանեան թերակղզին ապաստանութեան թատր դառնայ և օսմանեան տիրապետութիւնը վրտանող խռովութիւններ ծագեցնէ, Սուլթանին զինուորները պատրաստ պիտի ըլլան իրենց պարտքը կատարելու (անդէն ժողովուրդը քաջաբար կոտորելու): Գուռը ինչպէս կերեւայ, քնացած չէ և իրեն ձեռք առած միջոցները այս բանը ըստ բնականին կապացուցանեն:

Ի Ա Ռ Ն Ի Լ Ո Ւ Ր Ե Ր

Սուլթանին ծննդեան տարեգարձը Թուրքիոյ բոլոր կէտերուն վրայ մեծ հանդէսներով կատարուեցաւ: Այս առթիւ մամուլը կեղծաւորութեան անհատնում հոսանքներ հուեցուց: Մըտիկ ընենք Սէրվէթը. «Միլիտանտոր մարդիկ Սուլթանը կը ճանչնան իրբեւ իրենց քաղաքական և կրօնական պետ: Այս երկեակ գերիշխանութիւնը որ հուսկուեցաւ նաև Վիլհելմի կայսեր կողմէն Գամալիտի մէջ, Սուլթանին անբաղաւորութիւն ուժ մը կը նուիրէ և եւրոպայի մեծագոյն ինքնակալները իսկ կակնածին իրմէ և բարեկամութիւնը կը փնտռեն:

—Սուլթանը 1000 օսմ. ոսկի պարգեւ տալ խոստացաւ, իր իրական Ղանի պէյին պանդը գտնողին:

—Քանէէն կիմացնեն թէ կըրէտէի գործ. ժողովը լուծուեր է:

Պ. Սքաքիաքանիս հրաժարեր է, բայց Երկիրոս իշխանը մերժեր է այդ հրաժարականը:

—Տէյլի Գրո՛ւ իբլ կը գրէ թէ նիգոլա մեծ դուքսը յոյժ զգոհ մնացեր է Պոլսոյ մէջ գըտած պաղ ընդունելութենէն, որ նոյն իսկ Ֆերաիեանտ իշխանին եղած ընդունելութեան չէ համապատասխանած:

—Սպանիոյ նախարարապետ Պ. Սակաստա ծանրապէս հիւանդ է: Գրեթէ միակ անձնաւորութիւնն է որ ընդունակութիւն կը ցուցնէր Սպանիան իր հիմակուան ինկած վիճակէն բարձրացնելու:

—Ի. Պոլսէ կը գրեն թէ Գերմանական դեսպանը երկար տեսակցութիւն մը ունեցեր է Սուլթանին հետ, Հայտար փաշայի մէջ նուազանգիստ և քարափ կառուցանելու մենաշնորհ ձեռք բերելու համար: Այս խնդրանքը սկզբունքով ընդունուեր է Գրան կողմէն, հակառակ Ֆրանսայի և քարափանց ընկերութեան գիմադրութեանց:

—Պ. Բարատիամանտօրուօ, Սելանիկի նախկին յունական հիւպատոսը, Երկիրոս իշխանի քաղաքական դիւանի պետ անունուեր է:

—Սուպրանիէի նստաշրջանը վակուեցաւ: Սթոյիլովի մէկ բանաստեղծութիւնովը:

—Պուլկարական Սինոգիին նախագահ Տ. Կրէկորիոս մետրապօլիտը մեռաւ Սօֆիայի մէջ:


—Մալիւմաթ, կը ծանուցանէ թէ Ենէմէնի մէջ ձերբակալուած է չէյս մը իր չորս զաւակներով և բանտարկուած Սաուաի բերդին մէջ:

Թ. Ջ Տ Ր Ո Ն

Ամսոյս 27ին թաաբակաան ներկայացուց մը պիտի տրուի Անկէլ Սլավոֆի սրահին մէջ Ինպաստ Կիր Պատուաւորութեանի, Երկրայացուցուելիք խաղէ Բէրլայէզ վասիէթնամէսի կամ Եւլի ձեղասան, գրք պատրաստած է Տ. Արթին Ձեթ:

ԲԱՉՄԱՎԷՊ
Ա Մ Ս Ա Թ Ե Ր Թ
Տ Ի Պ Տ Տ Տ Տ
Տարեկան գին՝ 10 Քր. — Երկրայ. Տարեկան գին՝ 2 Տարեկան
Հասցէ՝ Բէտաքսիոն տը լա ուղիւ Բագմովէզ. Ս. Լագար:
Վրնիզ (Իթալի)

Երկու վարժ և փորձաւոր գըրաշարներ, որոնք այս պահուստ Ռուսական կը գտնուին, կը փափոցին ո ե հայ ապարանի մէջ պաշտօն ստաննել: Բանակցութեանց համար գիմել «Նար-ժու՛րի խմբագրութեան:

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ  Եթէ կուզէք հագնել կոշիկներ, որոնք իրենց վրայ միացուեն ձեր և զիմաց կուտուրեան կատարելութիւն և մանուսնոյ գինի չափաւորութիւն, առանց վարանելու գիտեցէք Ստեփան Խորասանձեանի, Մուսալա, բաղնիք փողոց, հանի Հասան Լֆէնտի օթէլին տակ. հաւատալիք որ ստիճէն պիտի օգտուիք:

Տ Պ Ա Ր Ա Ն
Ա Ր Ե Ի Ե Լ Ե Ա Ն
Օ. Բ Ա Ր Ս Ե Ղ Ե Ա Ն Ի
Վ. Ա. Ռ. Ն. Ս.
Սերկար քաղ. Երբէնձոմ փողոց.
Սազալլը 21օժէ կից.
Կը ազգային հայրեն, պուլկարեն, գաղափարեն, յաւաքեն, առնիքեն, և այլ լեզուներով պոյետան, հասցեալ, հարստեան հրաբորդի, ազգայնութիւն, նամակագրութի, գոհարան, մահազգ, վաճառականութեան ամէն տեսակ գործեր, գիրք, լրագրք, և այլն:
Գուճաւոր եւ ոսկեգոծ զարգազորներու համար ամէն լեզու եղի սառեւ եւ մասնաւոր գործիքներ կը գտնուին:
ՄԵԾ ԽԱՍՄԻ ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ
ԳԻՆԵՐԸ 808Ժ ԳԻՆԵՍՄԱՍՏԵԼԻ
ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ
ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ
ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

Отговорникъ: А. СУКЯСОВЪ.
Печангига „Взаимность“, Варна